ACBA-CREDIT AGRICOLE BANK

Թիվ 01-610

13 հունիսի 2019թ.
ք. Երևան

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 16 55 40 01374/3

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «ԱՐԵՎԻԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքվելիք Ապրանքի մատակարարման թիվ ՀՀԿԳՆՄԱՊՁԲ-19/24 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

Սույն երաշխիքով բենեֆիցիար է համարվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Բենեֆիցիար):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 45.617.910 (քառասունհինգ միլիոն վեց հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր տասը) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի ՀՀ ՖՆ գործառնական վարչությունում բացված 900005028106 բանկային հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 21 հոկտեմբերի 2019թ.-ը ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է Պրինցիպալի կողմից թիվ «ՀՀԿԳՆՄԱՊՁԲ-19/24» պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող Պահանջ և կից փաստաթղթեր, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջի գումարն ամբողջությամբ, ապա Բենեֆիցիարն իրավունք ունի Երաշխիք տվող անձի բանկից պահանջելու Երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն Երաշխիքի իր օրինակը:

Կենտրոնական գրասենյակ
ՀՀ, Երևան, 0002, Արամի 82-84
82-84 Aram st., Yerevan, 0002, RA
acba@acba.am / (+374 10) 31 88 88 / www.acba.am

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող Պահանջ և կից փաստաթղթեր, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձն իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, Երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում Երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

12. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ֆինանսական ցցով
գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ս. Զաքինյան